ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՑԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 13րդ շրջանի (97օգոստ.—98յունիս) բաժնորդագինն է 20 Ֆր. կանխիկ. Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Ֆր. հաշուելով և 1898յունիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է ղրկել հեռևեալ հասցէով. M. PORTOUKALIAN. Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)։

ՄԻԱՑԵԱԼ ԹԻՒ 39

1898 ՕՈՒՆՈՒԱՐ 22

1898 ՅՈՒՆՈՒԱՐ 10 (Հ. Տ.)

ԾԱՌԱՔ

Կը հրատարակուի Ուրբ. և Շաբթ. օրերը

ԳԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ ամբողջ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Չարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Գանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Գանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction : Rue Fortia, 7.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քիւպա, Մարքի, Մաքսիմօ-Կոմէզ. — Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներին (Նիւ Եորք). — Վեհ. Կարդինալոսի ուղեւորութիւնը. — Մեծ պետութիւնները, Թիւրքիա եւ Յունաստան. — Տեղական. — Մի հարցում. — Գանուցումներ. — Բանասիրական (Մարսէյլի մէջ պանդխտութեանս յուշագրին)։

ՔԻՒԲԱ. ՄԱՐՔԻ. ՄԱՔՍԻՄՕ-ԿՕՄԷԶ

Մեծ և փոքր Անթիլեաններու գըբէթէ ամենահարկաւոր մասերն այցելել յետոյ, մենք հասանք ի Սանթիակօ Քիւպա։

Քիւպա իր անունն ծաւալով, 119,000 քառակուսի քիլօմէթր տարածութեամբ, Անթիլեաններու մէջ ամենէն մեծ և նոյն համեմատութիւնով ի բնականէ ամենաճոխ կղզին է։ Իւր ոսկիի, արծաթի, առաւել ևս պղինձի հանքերը, Հաւանի հանրածանօթ ծըխախոտ և մանաւորապէս ծովային վաճառականական եղերքները՝ ի բնական չվնասած յարմարագոյն նաւահանգիստներու վրայ՝ կը դարձնեն Քիւպան «Անթիլեաններու մարգարիտ — La perle des Antilles»։

Սկսած Ամերիկաի գիւտէն՝ 1492ին Քրիստոֆ Քօլոմպ առաջին անգամ հանդիպեցաւ այստեղ և այն թուականէն ի վեր գա Սպանիաի համար մի անսպառելի գանձ դարձաւ, ուրկէ կը հայթայթուէին ամբողջ հիւսիսային Ամերիկաի սուրճն ու չաքարը. այս պատճառաւ Քիւպա կը նշանակուի իբրև Սպանիաի «կաթնառու կով» և իրաւ չհաբերուելիան մասին այդ ազգ չէ ունեցած մի այլ գաղթակառնուելիւն որ հաւասար լինի Քիւպային։

Բայց Սպանիա անհոգ ձեռով բարգաւաճելու կղզին, Նորան տիրացաւ մի այնպիսի բացարձակ եղանակաւ որ թոյլ չէր տար տեղացիներուն օգտըւելու իրենց բնական հողի առաւելութիւններէն և իւրացուց ամենայն ինչ իւր արդիւնաբերութեան, որոցմէ զրկելէ յետոյ բնիկները, անոնց վրայ ծանրացուց նաև տուրքերու և հարստահարութեան մի ընկճող բեռ։ Ահա այս կացութիւնն էր որ ծնունդ տուաւ 1868ի առաջին ապստամբութեան և սա նշանակելի առիթ դարձաւ սպանիական կառավարութեան գաղտագողի խժդժութիւններուն, լինելով այսպէս պատճառ հին և նոր աշխարհներու մէջ՝ սպանիական վատահամբաւութեան՝ որին յետոյ պիտի յաջորդէր այդ կառավարութեան գահավիժումը դէպի կորուստ։

Հազար ութ հարիւր վեցտասն ուրիշ Սպանիաի հրատարակած խոստում մը կղզին պիտի բարեկարգէ, վերջ տուաւ ապստամբութեան և մի առիթս խաղաղութիւն տիրեց. այս հանդարտ կարծուած ժամանակամիջոց տևեց մինչև իննսունն և վեց թուական. բայց 1868էն յետոյ՝ այսինքն քսան և ութ տարուան ընթացքին մէջ, ուր ոչ մէկ բարեփոխութիւն կարելի չէ նշանակել ի նպաստ Քիւպային, Մարթի Նիւ Եօրք քաշուած՝ լուրկ և իր անուան արժանաւոր իմաստութեամբ կը պատրաստէր այս օրուան ապըստամբութեան յաջողակ ծրագիրը։

Լինելով բնիկ զաւակ իր սիրած երկրին, որին խորապէս ուսումնասիրած էր, մեծ յեղափոխիչը կը փնտըռէր թափանցել այն ամեն գաղտնիքներուն, որ պէտք էին իրեն լուսաբանել ապստամբութեան մ՚ամեն պարագայներն որոց մէջէն ծնունդ առնելու էր իր հայրենիքի ազատութիւն և ոչ թէ մահ։ Ասիկա ամենէն էական պայմանն էր և այն վերկարար միջոց որ կանուանի «պատրաստեալ յեղափոխութիւն»։»

Մարթի այնպէս կը ճանչնար իւր երկիր և մի այնպիսի սրատեսութեամբ էր օժտուած, որ նա յեղափոխական լինելով, նաև մի հանճար էր. ապստամբութենէն առաջ որոշ տեսնելով յեղափոխութեան մ՚ընդարձակ պատկերը, իբրև հազուագիւտ հեռատես՝ պատմութիւն նորան կտակած է այս յարգանք. «Մարթի չընդունիր ժողովուրդի կորուստ որ ըստինքեան ամօթալի է»։ և ի հարկէ իւր հայեցողութեամբ նա յեղափոխական էր, նա մի ստրուկ դաւաճան չէր անմեղ արեան։

«Աղատե՛նք մեր հպատակ ժողովուրդ, կասէր, առաջնորդելով իւր ուժէն, իւր հասկացողութենէն և իւր պատրաստութենէն. Քիւպաի փրկութիւն իր մէջէն կը սահեցնենք և մենք յեղափոխականներս կը մնանք նեցուկ անոր գահավիժման դէմ»։

Ասիկա Մարթիի սկզբունքն է։

«Մէկ քայլով գահավիժել փրկել փոքր ազգ մը, որին չյաջողիլ բազմադիմի անհասկանալի պատահասութիւններով, զգուշանալով նորա տգիտութենից, հրդեհել անոր միամիտ երևակայութիւն և աննպատակ դէպքին՝ փճացունել զինք իր հպատակութեան մէջ»։ Ահաւասիկ ամբողջ հայ թշուառական ու այլասերուած յեղափոխութեան։

Եւ ինչ որ կը կազմէ Քիւպաի յեղափոխութեան վտանգ, դա մի դրական եղանակ է, այնչափ հասկանալի որ կենաց ու մահուան րոպէին մէջ ներելի չէր տգիտանալ անոր։

Մենք այստեղ կարձանագրենք այդ դրական եղանակ և մենք այդ կը կանչենք ամենէն յոռի ականջ ներուն.

«Avant de recourir à la fortune des armes, les Cubains ne voulurent rien laisser au hasard».

«Քիւպացիները զէնքի դիմելէ առաջ այնպէս մը պատրաստեցին յեղափոխութիւնը, որ ո՛չ մէկ բան չուզեցին դիպուածին թողուլ»։

Պատմութեան այս որոշակի վկայութիւններուն դէպքերու ամբողջ ընթացքը մեզի կը լուսաբանեն յեղափոխական Քիւպաի յաջողութեան գաղտնիքը՝ քալելով ի յաղթանակ, որոյ եանէն կը մնան կորագլուխ իրենց մշանջենական

կը մտածեմ. ուր որ լինիմ, ծախքս նոյն է, բացի ճամբու ծախքէն. արդեօք կրնա՞յ տեսնել Լօնտօն։

Գտնուեցայ ճիշդ այն մարդոյն վիճակին մէջ որ ճամբան բազում ժամանակէ ի վեր չտեսած մի բարեկամ կը յիշէ և մի քանի քայլ յառաջ երթալով ոգևոյն կընդունի նոյն անձէն։

Սոյն դիպուածին յարևնմանը։ Սենեակիս դուռը զարկին։ Հայ երիտասարդ մը ներս մտաւ։ Առանց նստելու հարցուց թէ ես Հայ և գաղթակա՞ն եմ։ Խօսքը հաստատելով պատասխանեցի և հրամցուցի որ նստի մի խեղճուկ աթոռի վրայ։

Ապա ամենայն քաղաքավարութեամբ իր սոյն հարցին պատճառը փափաքեցայ իմանալ։

— Տիկին Ֆ... որ Հայ գաղթականաց խնամածու Անգլիական ընկերութեան կողմանէ պաշտօն ունի, յատկապէս հայարնակ տեղեր կը ղրկէ և խնամք կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

(Պանդխտութեանս յուշագրին)

(Շար. 38րդ բուհն եւ վերջ)

Մարսէյլի Հայը ո՛գիտէ ինչ հալածանք կրած է այն ժամանակները պապական կղերէն, քանի՛ քանի՛ ընտանեաց իւր աւուր պարէնը ճարող կենսական չահերուն մէջ. այն կղերէն որ իւր բուն տան մէջ է մինչ Հայը հոն օտարական էր։

Թշուառ Հայը, արիւն արտասուք թափելով, հազիւ կրցեր է հոգին նետել Մարսէյլի ափունքը։ Հիմա նորէն ո՞ր եւնէ երթայ։ Ի նկատի առնել հարկ է այն ժամանակայ երթևեկութեան դժուարութիւնները ալ։

Արդ տխուր, շատ տխուր ստիպողականութիւն եղեր է դէմը. համակերպիլ։

Այս համակերպութեան մէջ մինչ մարդոց անկեղծութիւն, բեռի թեթևութիւն գտեր է։ Եւ այս առաւելութիւնք զինքը տակաւ վարժեցուցեր են օտարանալ։

Այդ ժողովուրդը՝ որ այն ատեն ի սէր ազգին, ազգային եկեղեցւոյ, կուսակալ հոգին, այդ ժողովուրդը կամ անոր սերունդը չը գիտեր այսօր թէ ի՞նչ է Հայը։

Աւա՛ռս։

Այս խեղճ Հայք, բնական է, կա՛մ հալածուեր են իրենց հայրենիքէն և կամ այնպիսի բեռեր դրուեր է վրանին, որ չկարենալով տանիլ, ընտրեր են գաղթել։

Սիրուս կը խառնվի, երբ կը մտածեմ թէ նոյն և նման պարագաներ են որ զիս աստ մղեցին բերին, ուր կարօտ եմ ամեն բանի։ Ոչ միայն զիս, այլ բոլոր հետս եկողները. աստ լսացայ որ մեզի վիճակակից կան եղեր արդէն հարիւրներով. հետզհետէ ալ կուգան ամեն օր։ Թուրքիոյ ջուրերէն եկող ամեն շոգենաւ հետը ունի անպատճառ 20-30 Հայ գաղթական կամ փախստական։

Կառավարութիւնը ծեր մարդոց անկանոն մի քանի սրահները յատկացուցեր է անոնց և բաւական կերակուր ևս կը բաշխուի եղեր։

Երիտասարդք ոմանք դիմումներ ըրին գործ գտնելու համար։ Մի քանի Հայ վաճառատուններ կան. անոնց դիմողները յաջող պատասխան չառին։ Շոգենաւուն մէջ ընկեր մը ունէի որ յանձնարարուած մարդոյն դիմեր է, բայց չէ յուսադրուած։ Աւելի քան վաթսուն հազար խառնայի գաղթականք եկած տեղեկութեամբ են հոս ընտանեօք. և ասոնցմէ իւր քսան հազար անգործ կը պատին։ Սոքա գրէթէ բնիկ դարձած են և եթէ տեսնեն որ օտարականներ կուգան գործ կը փնտռեն, կը սկսին իրենք աղմկել թէ օտարականները Ֆրանսացիներու հացը խլել եկած են։

Ձեռարուեստի մասին Հայը իւ՞նչպէս մրցի Գաղիացւոյ հետ։ Անկախ գործ բանալու չափ դրամագլուխ կը պակսի մեզի, Ուստի Մարսէյլ անբաղդատելի է Հայ գաղթականութեան։

խաբեբայութեանց մէջ՝ «կրիտիկական էպոխայի» տզրուկները, ամենակարող իրենց սատանայական տակտիկներով ակամայ սուրի առջև մղելու ժողովուրդը իր անպաշտպան, անհասկացող և անպատրաստ վիճակի մէջ. և այս ամենքի հետևանք լինելու էր ի հարկէ մի այնպիսի ահռելի անկում որ ուղիղ պէտք էր համապատասխաներ ապականուած վարք ու բարքին և տարածուած անբարոյականութեան հետը։

Մարթի տասնվեց տարի անընդհատ առաջ տանելով Քիւպայի մէջ տեղական պատրաստութեան մեծ գործը, իր հազուագիւտ իմացականութեամբ ոչ տպնապալից պարագայ անտես չթողուց, ամեն ինչ ի նպաստ Քիւպայի ապստամբութեան կազմակերպելու համար, այդ ընդարձակ երկրի աշխարհագրական դիրք և անոր ռազմագիտական կէտեր անձամբ տեսաւ և ուսումնասիրեց։ Նա անձամբ ստուգեց Ծովեզերեայ այն մասեր ուրկից յեղափոխական բանակ միշտ հեռու պիտի կենար, և բոլոր այն կէտեր ուրտեղէն օգնութիւն և պաշար պէտք էին անցնիլ Քիւպային։ Այս եղանակաւ նա ոչ թէ միայն նախապէս գոյացուց տեղական ոյժ, այլ նաև այդ ոյժ մշտնջենական արաւ, ինչ որ կը կազմէ իւր աննման մեծութիւն։ Այստեղ դարձեալ կրկնենք ուրիշն. «Քիւպացիները զէնքի դիմելէ առաջ այնպէս մը պատրաստեցին ապստամբութիւնը, որ ո՛չ մէկ բան չուզեցին դիպուածին թողուլ»։

Եւ արդէն ասիկա կը բացատրուի Քիւպայի յեղափոխութեան զօրութեամբը. երկու հակառակ կողմերու՝ սպանիական ուժի մեծաւ մասամբ ջլատուած և յեղափոխականաց պատ-

---

տանի անոնց։ Դուք կը կարօտի՞ք բանի մը։

— Ամեն բանէ յառաջ անգլիական երկիր մը կուզէի առանձնանալ։

— Ուրեմն պէտք է գալ վաղը փողոց...։ Եւ եթէ կուզէք ծախսէ ազատ լինիլ, կրնաք անմիջապէս փոխադրուիլ անդ, ուր օթևան և կերակուրը տրուին ձեզ։

— Շնորհակալ եմ, վաղը կուգամ ալ անպատճառ։

Մարսէյլ հասած չարթուսս առջի կիրակին գացեր էի ես սոյն հասցէին, ուր Հայ քահանայն պատարագեց հայախումբ բազմութեան մ'առջև։ Այդ պատպարեալ էին երկու տեռէ և ամեն հասակէ իբր չորս հարիւր հոգի։ Զը կրցայ սրտայոյզ զգալ առջի սոյն կրօնական արարողութեան։ Տխուր բան մը զգացի երբ նոր նահատակելոց հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ։

— Աստ պատպարեալ հարիւրաւոր Հայերու հոգեհանգիստն է սա, կը մտածէի, որոնք պիտի ցրուին աստ և անդ և կորնչին յաւիտեան՝ ազգային տեսակետիւ։

Հետևեալ օր գացի պատպարան։ Զիս ներկայ ըրին փառաւոր մօրուքով, սիրուն դէմքով Անգլիացւոյ մը. գլխարկին առջև S. L. սկզբնատառերը կը կրէր։ Զինքը կանուանէին Գ. գնդապետ, և սակայն զինուորականի յատուկ նշան մը չէի տեսներ վրան։

Անձս, հայրենիքս և կարողութիւնս ստուգելու նպատակաւ ինծի ուղղած հարցմանց պատասխանեցի ճշդիւ։ Ապա բաստուած վիճակի մէջ առաջ մղած առօրեայ ընդհարումներու առաւելութիւնները առհասարակ յեղափոխական բանակին ի նպաստ կը վերլանան։

Մարթի ապստագրութեան ժամը հասած համարելով, 24 փետրվարին 1896, մեկնելով Նիւ-Եորքէն, անձամբ Քիւպա մտաւ ուր պարզեց ապստամբութեան դրօշակը որի ներքև իրեն սահմանուած էր առաջին ճակատամարտի մահացու գնդակը։ Հայց յեղափոխական Քիւպա հետզհետէ ետրնան հանեց իր պահուած զօրութիւնն և ժամանակի ընթացքին հետ Սպանիա ուշ ըմբռնեց Քիւպայի ուժի կարևորութիւնը, որոյ առջև այդ կառավարութիւն միշտ ստորադաս և տկարացեալ դիրքի մէջ կը դտնուի, աւելի կամ նուազ նմանողութեամբ Գասգօռի դէպքին։ Գասգօռ ծովեզերքէն մի քանի քիլօմէթր հեռու Քիւպայի հիւսիսային մէկ քաղաքն է. 1896ի վերջերը ապստամբները պաշարեցին այս քաղաք ուր կը դտնուէը սպանիական մի կարևոր վաշտ. անընդհատ տասն ևհինգ օր քաղաքէն 30,000 հրացանի գնդակ և 150 թնդանօթի հարուած տեղացին ապստամբներու վրայ, վերջնական արդիւնքն այն եղաւ որ ապստամբները իրենց մէջէն ուժի հոգի կորնչուցին և տասնևհինգ օրէն յետոյ տիւրեցին քաղաքին։

Մարթիի ժամանակակից զօրավար Մաքէօ՝ ամենէն նշանաւոր յեղափոխական բանակին գլուխ և ամենէն յանդուգնը՝ առաջին անգամ գրաւեց Բինալ Ռիօ և միևնոյն տարին գնդապետ կոչուեցաւ։

Բայց այդ ապստամբութեան առաջնորդող և անոր մեծ ոյժ ներշնչող՝ յեղափոխական Քիւպայի աչքը եղած է ի սկզբանէ մինչև այսօր՝ զօրավար Մաքսիմօ-կոմէզ. 70 տարե-

---

հարցուց թէ ի՞նչ կը փափաքէի ընել։

— Կը փափաքիմ, ըսի, ա՛զգիս գաղթականութիւն մը առանձնանալ և պարապիլ անասնաբուծութեամբ։

— Ուրեմն, ըսաւ, քեզ ըրկում ագարակ մը որ «Փրկութեան բանակ»ն ունի Լօնտոնի մօտ, ուր ժամանակ մը կենալով աւելի գործնական տեղեկութիւն կրնաս առնուլ այդ գործին վրայ. միանգամայն կուսանիս անգլիերէն լեզուն, որուն պէտք ունիս Անգլիոյ մէջ ապրելու համար։

Թարգմանով կը խօսէինք. «Փրկութեան բանակ» անունը նոր էր ինծի համար։ Սակայն եղած առաջարկը յոյժ և յոյժ կը պատասխաներ նպատակիս։ Թէ ինչո՞ւ համար, ահաւասիկ պատճառները։

Ստոյգ է որ գաղթելու վերջնական որոշումս տակաւին չէի ըրած։ Միշտ յոյս ունէի — և ունիմ — թէ Կ. պոլսոյ մէջ բարեփոխում կրնայ մուծանիլ և կրնայի դառնալ։ Հակառակը որ պատահէր, ի՞նչ ընէի։ Գաղիոյ քաղաքականութիւնը հայապաշտպան չէր երևեր որովհետև Լուսիոյ քաղաքականութիւնն ալ այդպէս չէր ներկայանար։ Բուն Գաղիոյ մէջ Հայ գաղթականութիւն հաստատուելու յոյս չկար։

Կը կարծէի որ անգլիական հողը աւելի ընդունակ է Հայ գաղթականութեանց։

Գ. Գնդապետին հետ տեսակցելէս երեք ժամ վերջը Մարսէյլէն հոգեկառք նստայ Փարիզ գնալու համար, ուր օր մը կենալով՝ կրկին ուղևորեցանք դէպի Լօնտոն։

Տ.

կան կտրիճ ծերունին մարմնացումն է Քիւպայի յեղափոխութեան. նա կը վայելէ երախտագիտութիւն իւր ժողովուրդին և կը ներշնչէ պատկառանք արտաքին աշխարհին։ Սակայն մեծ զօրապետն է որ գրաւեց Բօռնթօ-Քինօն և սպառնացաւ մայրաքաղաք Հաւանին։

Քայց Քիւպայի յեղափոխութիւնը ելեքտրական թելի նման մինչև սպանիական մայրաքաղաքը կառավարութեան ղլին մխուած զինք կը ցնցէ. տղայներու գործ չլինելով, նա անփորձութեան, սխալ հաշիւներու վրայ չափուած, մէկ քայլով գահավիժման մահացուցիչ փորձ չէ և պոռոտախօսութեան ու ընքնախաբութեան կեդտերով երբէք չէ աղաւաղուած։

Հասնելով ի Սանթիակօ Քիւպա, մենք գտանք այդ ընդարձակ և իբր նականէ դեղեցիկ նահանգիստըլեցուած սպանիական այլևայլ գաւակարգի ղրահաւորներով որոնք միշտ պատրաստ՝ կը սպառնան ապստամբներուն և կարգկեն անոնց առաջ գալու։ Նոյն կարգի մարտանաւեր կը հսկեն նոյնպէս Ծովեզերեայ գլխաւոր քաղաքներու առջև որով յեղափոխական բանակն առհասարակ հեռու մնալով Ծովեզերքէ, կը գործէ դէպի ներսերը։ Ծանօթ լինելով իրենց երկրի ամեն մէկ մասերուն, Քիւպացիները միշտ կը գտնեն ուէ միջոց օգնութիւն և պաշար ստանալու նոյն իսկ Ծովեզերեայ կէտերէ, ինչ որ կը նպաստէ իրենց դիմադրութեան և յայտնի է արդէն որ ապստամբութեան գործ անպայման կերպով կարող են չարունակել՝ միշտ լաւագոյն պայմաններու տակ։ Այդ պայմաններէ մին է, ոչ նուազ կարեւոր, օդի և տաքութեան աստիճանի փոփոխակի բնութիւնը որին տեղացիները կը դիմադրեն երբէք իրենց երկրի բնիկները, մինչ սպանիական բանակն անհամեմատ աւելի զոհեր կուտայ մահացու այլևայլ հիւանդութեանց։ Մի գաղափար տալու համար նշանակելի է որ յօրօրհաւանի հիւանդանոցներուն մէջ 30,000 սպանիացի զինուորներ կը խնամուին, բռնուած համաճարակ հիւանդութիւններէ և մեծ մասն առհասարակ կը մեռնի։ Նոյնը պատահեցաւ աւելի անբաղդ պարագայներու տակ 1878ի Քիւպայի խռովութեանց ժամանակ որմէ յետոյ ի Մատրիտ վերադարձող զօրքեր քիչ միջոցէն բոլոր Սպանիոյ մէջ տարածեցին դեղին կիմախի (fièvre jaune) համաճարակ հիւանդութիւն որ մինչև նոյն թուականի վերջեր ամբողջ Եւրոպային ըսպառնացաւ։ Այս պատճառաւ Սպանիա ջանաց և յաջողեցաւ տեղացիներէն հարիւր հազար հոգի զինուորագրել. բայց իրական կեանքի մէջ՝ մեր ժողովներն ինք ըստ ինքեան որչափ ալ զաւեշտական լինին, ծիծաղներ չեն կրնար քաղել մեզնէ երբ ազգային ընդհանուր վիճակը աչքի առջև ունինք. հեգնական ժպիտ մը հազիւ կրնան ստանալ։

Մեր ժողովները կուռի բոյն են դարձեր և կռիւն ալ անպէտք բաներէ համար է — այս է բոլորը։

Կըսեն թէ հասարակապետական երկիրներուն վեհաժողովներուն մէջ աչքը Սպանիա տնտեսականապէս ևս կը մաըի։

Քիւպայի ապստամբութիւն տարեկան 350,000,000 (երեք հարիւր հիսուն միլիոն) ֆրանքի նոր պիւտժէ բացաւ Սպանիայի համար. առով հանդերձ, սկսած իւր զօրապետներէն և մարտանաւերու հրամանատարներէն մինչև յետին զօրքին, տաս ամիսէ ի վեր ո՛չ մէկ ամսական չէ տրուած։ Զքաւոր վիճակի մէջ, առևտուր դադարած, երկիրը մեռեալ դրութեան հասած՝ անորոշ կացութիւն կը տիրէ մինչ այսօր, որ ընդհանուր տագնապի ենթարկած է Սպանիան և հիմայ կը հասկցուի Քիւպայի յեղափոխութեան կարևորութիւնը։

Սպանիա նեղլինալով, ինքնօրինութիւն տալու զինքն արաւ որին չեն համաձայները ապստամբները, այդ անբաւական և անգոհացուցիչ համարելով։ Վերջնական կարգադրութիւնը ի հարկէ կարելի չէ որոշակի ճշդել այժմէն. բայց Քիւպացին իր ոյժ լաւապէս չափած է և աւելի ևս լաւ կը ճանչնայ թշնամի բանակին զօրութիւնը։ Այս կացութիւն կը ներշնչէ իրեն այն յոյս որի համար նա ապառազինեալ ու պատրաստ վիճակի մէջ կը կռուի մինչև անպայման անկախութիւն։

ՎԱՐԱԶ

1897, դեկտ. 24

Ն Ա Մ Ա Կ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Նիւ Եորք, 29 դեկտ. 1897

Մեր ժողովները

Ազգային մտածումներու մէջ ընկղմած պահուն, Հայրենասիրութեան առջև անմիջապէս կը պատկերանայ հայրենիքի մէջ հազարաւոր անտերունչ որբերի անխնամ վիճակը, հազարաւոր խշտեառացած ընտանիքներու չքաւոր կացութիւնն որոնք մերկ, հողի վրայ նստած, ապրելու համար մի կտոր չոր հաց, տաքնալու համար մի քիչ վառելիք չունին ձմեռուան այս խիստ եղանակին մէջ։

Այդ աղետալի տեսարանէն կանգնինք մի ուրիշ տեսարան, մեր ժողովները, ուր այդ աղէտները թէև չեն կան, բայց նորէն տխրահնչիւն են, մի քիչ չափով։

Եթէ ողբերգական դերի մը երկու տեսիլներն լինէին ասոնք, վերջինը դերին զուարճական մասն եղած պիտի լինէր ունկնդիրներուն տխրամած դէմքերն մերթ ընդ մերթ զուարթացնելու համար, ողբերգութեան խոշոր ատաւորութիւնն պահ մը մէկդի վանելով. բայց իրական կեանքի մէջ՝ մեր ժողովներն ինք ըստ ինքեան որչափ ալ զաւեշտական լինին, ծիծաղներ չեն կրնար քաղել մեզնէ երբ ազգային ընդհանուր վիճակը աչքի առջև ունինք. հեգնական ժպիտ մը հազիւ կրնան ստանալ։

Մեր ժողովները կուռի բոյն են դարձեր և կռիւն ալ անպէտք բաներէ համար է — այս է բոլորը։

Կըսեն թէ հասարակապետական երկիրներուն վեհաժողովներուն մէջ աչքը

ՄԱՐԴԻԿ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ

ՊԵՏՔ ՉԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ,
ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԿԱ ՀԱՅՐԵՆԻՔ

Ա bas les Juifs! (Ա bas les Juifs)

Ցոյցը ղեպի ուրիշ տեղ մը կ՚երթար, երբ ոստիկանները կը հասնէին անոր առջեւ եւ կը փակէին անոր ճամբան։ Ցոյցը կը կանգ առնէր, ոստիկանները կը սկսէին ձերբակալել ցոյցի առաջնորդները։ Ցոյցը կը ցրուէր, ոստիկանները կը հեռանային, ցոյցը կը շարունակէր իր ճամբան։ Ցոյցը կը կանգ առնէր, ոստիկանները կը հասնէին անոր առջեւ եւ կը փակէին անոր ճամբան։ Ցոյցը կը ցրուէր, ոստիկանները կը հեռանային, ցոյցը կը շարունակէր իր ճամբան։ Ցոյցը կանգ առաւ Լա Ռիւնի մեծ հրապարակին մէջ։ Հոն ոստիկանները չկրցան ցրել զայն

Մարսէյլի ուսանողական ընկերակցութիւնը մի յայտարարութիւն տըւաւ տեղական լրագիրներին մէջ թէ ինք կը նշանակէ Հրեաների խանութները կողոպտելու գործողութիւնը, թէ ինք կրօնական վէճերի կուսակից չէ, այլ ազատութեան և հայրենիքի գաղափարներն են որ կը պաշտէ և ազգութեան պահապանն եղող զօրաբանակին եղած թշնամանքներին դէմ ուղղուած են իր ցոյցերը։

Երէկ բոլորովին հանդարտեցան ցոյցերը Մարսէյլի մէջ։

Այս ցոյցերի մէկ բարոյական հետեւանքն ալ այս եղաւ որ ապացուցուեցաւ թէ ֆրանսական ուսանողութիւնը որ կը կարծուէր թէ խոչընդոտութիւնը թողլով դէպի լոկ նիւթապաշտութիւն կը գահավիժի, գիտէ հարկին ոգևորուիլ հայրենասիրական և ընկերական վսեմ գաղափարներով։ իսկ Զօլա որ իր հեղինակած 20ի չափ վիպական հատորներին վրայ բարձրացած մի մեծ մարդ կը ներկայանար, այդ մեծ վիպասանը քաղաքագիտութեան մէջ մի փոքրիկ մարդ դուրս եկաւ։

ՄԻ ՀԱՐՑՈՒՄ

Հաճի Յարութիւն Ճանկիւլեան Ա. թէնքի «Միութիւն»ին մէջ «կոչ Միութեան» վերնագրով մի երկար յօդուած հրատարակած է, որի մէջ, ի միջի այլոց, կը գրէ թէ «փորթուգալեան գինք խաբած և վստահութիւնը չարաչար գործածած լինելով, իր յարաբերութիւն խզած է եղեր փորթուգալեանի հետ»։

Ճանկիւլեանի այդ նամակի մէկ ամփոփումը Գուկարիսի «իրաւունք»ն ալ փութացեր է հրատարակել, թէև դուրս թողլով «խարէութիւն և վստահութեան չարաչար գործածում» բառերը։

Մենք չենք ուզեր նայակալ ենք «Միութիւն»էն որ առանց սրբագրելու, ճշդութեամբ հրատարակեր է Ճանկիւլեանի ստորագրած նամակը, այնպես որ կարդացողը, նթէ քիչ շատ ծանօթ է ազգային վերջին 13ամեայ անցքերին, կը հասկնայ Ճանկիւլեանի ի՛նչ ճշմարտախօս լինելը ...։

Ճանկիւլեանին անձամբ տեսնողները՝ մի քիչ տեսակցելէ յետոյ, կը հասկնան թէ խելքէ թեթև մէկն է նա և իր ըսածներ անոր համեմատ կը դատեն. հետևապէս մենք բնաւ նշանակութիւն չէինք տար անոր բերանացի ասածներին Հայց որովհետև գտնուեր են երկու Հայ խմբագիրներ որոնք այդպիսի մէկի մը գրածին նշանակութիւն տալով հրատարակեր են և հետևապէս Ճանկիւլեանը չճանչող հեռաւորնակ ազգայիններ ալ կրնան մոլորուիլ և խելքը գլուխը մի մարդ կարծելով նշանակութիւն տալ անոր գրածին, ուստի մենք յիշեալ խմբագրութիւններին դիմելով կը խնդրենք որ հաճին նաև Ճանկիւլեանի ստորագրութիւնը կրող մի պատասխան հրատարակել մեր սա հարցման.

Ճանկիւլեանին ի՞նչ ըսեր կամ ըրեր ենք զինք խաբած լինելու համար. ի՞նչ բանի մէջ զինք վստահացուցեր և յետոյ իր վստահութիւն չարաչար գործածեր ենք եղեր. թէ ի՞նչ տեսակ յարաբերութիւն ունի եղեր մեզ հետ և ո՞ր ժամանակ ու ի՞նչպէս խզեր է այդ յարաբերութիւն։

Վերացական բառերը ընչանակութիւն չունին հոգ. պէտք է եղելութիւնները ներկայացունել որ մենք ալ խօսինք մեր կարգին, այդ պատմուածների արժէքը ցոյց տալով։

Մ. փ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,,Ի ԱԳ ՇՐՋԱՆԻՆ

(1897 *ՕԳՈՍՏՈՍ*—98 *ՕՈՒՆԻՍ*)

Պայմանները դրուած են թերթին ճակատը «Բաժանորդագրութիւն» վերնագրին տակ։

ԾԱԽՈՒ ՕՐԱՑՈՑ

Արժ. Տ. Ղևոնդ քահանայ Փափազեանի հրատարակած 1898 թուականի պատկերազարդ հայերէն և ռումաներէն Տարեցոյցի (որի մասին խօսուած է Արմենիայի 35րդ թուին մէջ) պարզ տեսակէն ծախու կը գտնուի նաև Արմենիայի խմբագրատան մէջ։ Գինն է մէկ Ֆրանք։

Իսկ լաթակազին համար որի գինն է 1 Ֆր. և 50 սնթմ. և ոսկեզօծին համար որի գինն է 2 Ֆր., պէտք է դիմել կառ. Արժ. հրատարակչին։

ՐԱՖՖԻԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուում է բաժանորդագրութիւն. —

1. *«Յամուէլ» Հատոր Ա. Բ. և Գ.*
2. *«Դաւիթ բէկ» Հատոր Ա. Բ. և Գ. վերջաբանով։*
3. *«Կայծեր» Հատոր Բ. վեպատառ։*

Երեք գրքերի բաժանորդագինն է միասին 12 չիլինգ. լոյս տեսնելուց յետոյ 1 անգ. ոսկի։

«Յամուէլ»ը արդէն ամբողջ տակն է և լոյս կը տեսնի Յունվար ամսին։

Րաֆֆիի վաճառելի երկերն են՝

	չիլինգ
1. «Խենթ և Ջալալէդդին» մի գրքի մէջ ամփոփուած. գինն է	6
2. «Խաչագողի Քիչատակարանը» չորս մասերը մի գրքի մէջ ամփոփ.	5
3. «Կայծեր» Հատոր Առաջին (սակաւաթիւ)	4½
4. «Վէպիկներ և Պատկերներ» Հատոր Ա. և Բ.	9
5. Խամսայի Մելիքութիւնները»	4½
6. «Ջահրումար» վէպ	4½
7. «Մինն այսպէս և միւսն այնպէս» պատկերազարդ վէպ	2
8. «Կայէնի կտակը»	2½
9. «Ցանկահայք»	1

Բաժանորդագրութեան և վաճառելի գրքերի համար պիտի դիմել՝

Mme Raffi — 270, Uxbridge Rd.
Shepherd's Bush,
London W.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիները մէջ հաշուուած է նաև ղրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլօ) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

Արտօսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Զարսանճագի, Ճապաղչուրի և Երզնկայու։ Գաւելուած ըստ խնդրանաց ազգասիրաց «Խոզան գաւառ»։ Աչխատասիրեաց Պօղոս Ծ. վ. Նահանեան. 2 ֆրանգ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐՈՒ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ Ա ԻՆՆՈՒԱՆ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՆԵՑ ԱՊԼՂԱՔՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի Թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքէն սպաննուած և անհետացած է աչխարհէ։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ԺՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայերնաասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ։ Բերեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան առաւօրութիւնների տակիւրերեան գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չէ լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորները որոնք իրրև նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններէն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

«Արմէնիայի թուղթ»ը (papier d'Arménie) որ զօրաւոր հականեխական մ'է, կը մաքրէ բնակարանների օդը։ Շնչառական գործարանների տկարութիւն ունեցողներին հանգստութիւն կը պարգեւէ իր անուշահոտ բուրմունքով։ իր եւ իրենների առողջութեան հոգ տանող ամեն մարդէ բնակարանին մէջ անհրաժեշտ պէտք է, նոյնպէս շատ պէտք է ճանապարհութեան մէջ, իջած օթեւանին (hôtel)սենեկի օդը մաքրելու համար, քանի որ մարդ չգիտեր թէ իրմէ առաջ հոն բնակած անձը շատ կամ քիչ առողջ մէկն էր։

Մարսէյլի մէջ կարելի է առնել «Արմէնիայի թուղթ»ը Արմենիայի խմբագրատունէն ալ, ուր պահեստի (dépôt) դրուած է, հետեւեալ գիներով։

35 սանթիմ է մէկ տետր կը որ կը պարունակէ ծխելիք 8 թերթ (մէկ թերթը 3 կտորէ կը բաղկանայ և ամեն մէկ կտորին վրայ տպուած է Papier d'Arménie եւ չինող գործատանատէրին ստորագրութիւնը A. Ponsot։ Մէկ գեղեցիկ տուփ որ կը պարունակէ 12 տետրակ եւ 2 ալ թիթեղէ թղթակալ, 3 ֆրանք եւ 60 սանթիմ է։

Մարսէյլէն դուրս ղրկուելու համար 1 տետրակի գինն վրայ պէտք է աւելցունել նաեւ փոստի ծախքը 15 սանթիմ։ Նոյնպէս փոստի ծախքով կարելի է ղրկել մինչեւ 5 տետրակ միեւնոյն ծրարի մէջ դրուած։ Մէկ տուփի գինն վրայ պէտք է աւելցունել փոթթի ծախքի համար 20 սանթիմ։

Ապահովագրուած (recommandé-registered) ղրկուիլ ուզողները պէտք է վճարեն նաեւ ապահովագրութեան ծախքը որ է 25 սանթիմ 1 ծրարի համար։ 16—26

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Le Gérant : François CARRIERE
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi
9, Quai du Canal, 9